

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2021 թվական

N\_\_\_-Ա

ք. Ստեփանակերտ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 32-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հավանություն տալ «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին:

2. Արցախի Հանրապետության Ազգային ժողովում «Նոտարիատի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը քննարկելիս Արցախի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ նշանակել Արցախի Հանրապետության արդարադատության նախարար Ժիրայր Միրզոյանին:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Նոտարիատի մասին» 2005 թվականի մարտի 23-ի ՀՕ-184 օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարն իր գործունեությունն իրականացնում է պետական նոտարական գրասենյակում (այսուհետ՝ նոտարական գրասենյակ):

Նոտարական գրասենյակները գործում են Արցախի Հանրապետության տարածքում՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ արդարադատության նախարարություն) համակարգում:

Նոտարական գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերը սահմանում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար)՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի կառավարման, անվտանգության ապահովման և ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:

Մեկ նոտարական գրասենյակում կարող են աշխատել մեկ կամ մի քանի նոտարներ:

Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:»:

2) 2-րդ մասի առաջին պարբերությունից հանել «՝ նոտարական տարածքում» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում «տարածք» կրկնվող բառը փոխարինել «գրասենյակ» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարական գրասենյակին արդարադատության նախարարությունը տալիս է Արցախի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով նշված են «Արցախի Հանրապետություն» բառերը, նոտարի անունը, ազգանունը և նոտարական գրասենյակի անվանումը:»:

**Հոդված 4.** Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոտարական գրասենյակում նոտարի ժամանակավոր բացակայության, ինչպես նաև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով պաշտոնից ազատման կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքով

լիազորությունների դադարման դեպքերում արդարադատության նախարարն այդ նոտարի լիազորությունների իրականացումը նոտարի ժամանակավոր բացակայության ժամանակահատվածում, իսկ պաշտոնից ազատման կամ լիազորությունների դադարման դեպքում՝ անժամկետ, կարող է դնել այլ նոտարական գրասենյակի նոտարի վրա: Այս դեպքում նոտարն իրավունք ունի իր գործունեությունն իրականացնել կամ իր նոտարական գրասենյակի, կամ փոխարինվող նոտարի նոտարական գրասենյակի միջոցով:»,

2) 2-րդ մասում «տարածքում» բառը փոխարինել «գրասենյակում» բառով,

3) 5-րդ մասում «տարածք» բառը փոխարինել «գրասենյակ» բառով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Արցախի Հանրապետությունից տեղահանված բնակչությանը նոտարական գործողություններ կատարելու կամ այլ ծառայություններ մատուցելու համար նոտարը կարող է ժամանակավորապես գործուղվել Հայաստանի Հանրապետություն:»:

**Հոդված 5.** Օրենքի 27.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «տարածքը» բառը փոխարինել «գրասենյակի անվանումը» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում «տարածքը» բառը փոխարինել «գրասենյակի անվանումը» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### Հոդված 3. Պետական նոտարական գրասենյակները

1. ~~Նոտարն իր գործունեությունն իրականացնում է պետական նոտարական գրասենյակում (այսուհետ՝ նոտարական գրասենյակ), որը պետք է գտնվի նրա համար սահմանված նոտարական տարածքում: Նոտարական տարածքն այն վարչատարածքային միավորն է, որի սահմաններում նոտարն իրականացնում է իր գործունեությունը:~~

~~Նոտարական գրասենյակները գործում են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ արդարադատության նախարարություն) համակարգում:~~

~~Նոտարական տարածքները սահմանում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար): Մեկ նոտարական տարածքում կարող է գործել մեկ կամ մի քանի նոտարական գրասենյակ: Մեկ նոտարական գրասենյակում կարող են աշխատել նույն նոտարական տարածքում գործունեություն իրականացնող մեկ կամ ավելի նոտարներ:~~

~~Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:~~

*1. Նոտարն իր գործունեությունն իրականացնում է պետական նոտարական գրասենյակում (այսուհետ՝ նոտարական գրասենյակ):*

*Նոտարական գրասենյակները գործում են Արցախի Հանրապետության տարածքում՝ Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ արդարադատության նախարարություն) համակարգում:*

*Նոտարական գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները և գտնվելու վայրերը սահմանում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար)՝ քաղաքացիների հարմարավետության, հերթերի կառավարման, անվտանգության ապահովման և ժամանակի արդյունավետության սկզբունքների հիման վրա:*

*Մեկ նոտարական գրասենյակում կարող են աշխատել մեկ կամ մի քանի նոտարներ:*

*Նոտարական գործողություններ կատարելու համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ, անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Եթե շահագրգիռ անձի՝ տեղաշարժի հնարավորությունը սահմանափակող հիվանդության կամ անօգնական վիճակի պատճառով նոտարական գրասենյակում նոտարական գործողությունների կատարումն անհնարին է դառնում, ապա շահագրգիռ անձի դիմումի հիման վրա նոտարը պարտավոր է դիմումը ներկայացնելու օրը կամ դրան

հաջորդող աշխատանքային օրը նոտարական գործողություններ կատարել նոտարական գրասենյակից դուրս՝ նոտարական տարածքում:

Նոտարական գործողությունները կարող են կատարվել նոտարական գրասենյակից դուրս նաև սույն օրենքի 50-րդ, 52-րդ, 71-րդ, 73-րդ հոդվածներով սահմանված դեպքերում:

Այս դեպքերում նոտարը պարտավոր է վավերացման մակագրության մեջ և գրանցամատյանում նշել նոտարական գործողության կատարման վայրը (հասցեն):

3. Նոտարական գրասենյակների քանակը և հաստիքացուցակը սահմանում է արդարադատության նախարարը:

Նոտարական գրասենյակների ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

*(3-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

## **Հոդված 5. Նոտարի անկախությունը**

1. Նոտարը նոտարական գործողություն կատարելիս կամ նոտարական այլ գործունեություն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

Նոտարի գործունեությանը միջամտելը, այդ թվում՝ նոտարական գործողություններ կատարելուն հարկադրելը կամ ներգործելը արգելվում է և առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Նոտարի գործունեությունը կարող է դադարեցվել միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և հիմքերով:

3. Նոտարը չի կարող առանց իր գրավոր համաձայնության փոխադրվել այլ նոտարական տարածք **գրասենյակ**: Նոտարն իր համաձայնությամբ կարող է տեղափոխվել այլ նոտարական տարածք **գրասենյակ** միայն նոտարի թափուր հաստիքի առկայության դեպքում:

*(5-րդ հոդվածը խմբ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

## **Հոդված 7. Նոտարական գրասենյակի կնիքը և դեպոզիտ հաշիվը**

~~1. Նոտարական գրասենյակին արդարադատության նախարարությունը տալիս է Արցախի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով նշված են «Արցախի Հանրապետություն» բառերը, նոտարական գրասենյակի անվանումն ու նոտարական տարածքը անվանումը:~~

**1. Նոտարական գրասենյակին արդարադատության նախարարությունը տալիս է Արցախի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով նշված են «Արցախի Հանրապետություն» բառերը, նոտարի անունը, ազգանունը և նոտարական գրասենյակի անվանումը:**

Նոտարական գրասենյակի կնիքը դրվում է նոտարի կողմից վավերացվող կամ հաստատվող կամ նոտարի կողմից տրվող բոլոր փաստաթղթերի կամ հաշվետվությունների, ինչպես նաև դրանց կրկնօրինակների վրա:

2. Նոտարական գրասենյակը կարող է ունենալ դեպոզիտ հաշիվ, որն օգտագործվում է սույն օրենքով սահմանված նոտարական գործողությունների իրականացման համար:

*(7-րդ հոդվածը փոփ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

**Հոդված 16. Նոտարի փոխարինումը և գործուղումը**

*(վերնագիրը խմբ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

1. ~~Նոտարական տարածքում նոտարի ժամանակավոր բացակայության, ինչպես նաև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով պաշտոնից ազատման կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքերում արդարադատության նախարարն այդ տարածքի նոտարական սպասարկման լիազորությունների իրականացումը նոտարի ժամանակավոր բացակայության ժամանակահատվածում, իսկ պաշտոնից ազատման կամ լիազորությունների դադարման դեպքում՝ անժամկետ, կարող է դնել այլ նոտարական տարածք սպասարկող նոտարի վրա: Այս դեպքում նոտարն իրավունք ունի լրացուցիչ նոտարական տարածքն սպասարկել կամ իր նոտարական գրասենյակի, կամ լրացուցիչ տարածքի նոտարական գրասենյակի միջոցով:~~

**1. Նոտարական գրասենյակում նոտարի ժամանակավոր բացակայության, ինչպես նաև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով պաշտոնից ազատման կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքերում արդարադատության նախարարն այդ նոտարի լիազորությունների իրականացումը նոտարի ժամանակավոր բացակայության ժամանակահատվածում, իսկ պաշտոնից ազատման կամ լիազորությունների դադարման դեպքում՝ անժամկետ, կարող է դնել այլ նոտարական գրասենյակի նոտարի վրա: Այս դեպքում նոտարն իրավունք ունի իր գործունեությունն իրականացնել կամ իր նոտարական գրասենյակի, կամ փոխարինվող նոտարի նոտարական գրասենյակի միջոցով:**

2. ~~Նոտարական տարածքում գրասենյակում~~ նոտարի ժամանակավոր բացակայության, ինչպես նաև սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով պաշտոնից ազատման կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքերում արդարադատության նախարարը սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխանող նոտարի օգնականին կարող է նշանակել նոտարի ժամանակավոր պաշտոնակատար: Այս դեպքում նոտարի օգնականը օժտվում է նոտարի լիազորություններով և կրում է սույն օրենքով նոտարի համար նախատեսված բոլոր պարտականությունները և պատասխանատվությունը:

3. Նոտարին փոխարինողը գործում է իր անունից:

4. Ժամանակավոր բացակայության դեպքում նոտարին փոխարինելու հիմքերն են՝

- 1) ամենամյա արձակուրդում գտնվելը.
- 2) հղիության և ծննդաբերության արձակուրդը.
- 3) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը.
- 4) ժամանակավոր անաշխատունակությունը.
- 5) երեխայի կամ ընտանիքի անդամների հիվանդությունը (խնամքի անհրաժեշտության դեպքում).
- 6) գործուղումները.
- 7) վերապատրաստումները.
- 8) երկու աշխատանքային օրից ավելի աշխատավայրից փաստացի բացակայության այլ դեպքեր:

5. Նոտարը կարող է գործուղվել այլ նոտարական ~~տարածք~~ **գրասենյակ** միայն իր համաձայնությամբ՝ արդարադատության նախարարի հրամանով:

**Արցախի Հանրապետությունից տեղահանված բնակչությանը նոտարական գործողություններ կատարելու կամ այլ ծառայություններ մատուցելու համար նոտարը կարող է ժամանակավորապես գործուղվել Հայաստանի Հանրապետություն:**

*(16-րդ հոդվածը լրաց. 21.02.2013 ՀՕ-1-Ն, խմբ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

#### **Հոդված 27.1. Նոտարական ակտը**

1. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքում կայացվող որոշումը, գործարքի կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը հանդիսանում են նոտարական ակտ:

2. Նոտարական ակտը պետք է բովանդակի՝

- 1) նոտարական ակտի համարը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը.
- 2) նոտարական ~~տարածք~~ **գրասենյակի անվանումը**, նոտարի անունը, ազգանունը.
- 3) նոտարի ստորագրությունը և կնիքը.
- 4) առկայության դեպքում՝ պետական տուրքի և նոտարի մատուցած ծառայությունների վճարի չափը.

5) օրենքով սահմանված այլ պարտադիր պայմաններ:

*(27.1-ին հոդվածը լրաց. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

#### **Հոդված 40. Վավերացման մակագրությունը**

1. Վավերացման ենթակա նոտարական գործողություններ կատարելիս նոտարը վավերացվող յուրաքանչյուր փաստաթղթի վրա կատարում է համապատասխան վավերացման մակագրություն, որում մասնավորապես նշվում են նոտարի անունը, ազգանունը, նոտարական ~~տարածք~~ **գրասենյակի անվանումը**, կատարվող նոտարական գործողության տեսակը, կատարման տարին, ամիսը, օրը (բառերով), գրանցամատյանում համապատասխան գրանցման համարը, ինչպես նաև նոտարի հայտարարությունն այն մասին, որ նոտարական գործողության մասնակիցների ինքնությունը, իրավունակությունը կամ գործունակությունն ստուգված են:

2. Օտար լեզվով վավերացվող փաստաթղթերի վրա վավերացման մակագրությունները կարող են կատարվել համապատասխան լեզվով:

3. Վավերացման մակագրությունների օրինակելի ձևերը հաստատում է արդարադատության նախարարը:

4. *(կեսոն ուժը կորցրել է 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

5. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ վավերացված փաստաթուղթը չունի սույն օրենքով նախատեսված ապացուցողական ուժ:

*(40-րդ հոդվածը փոփ. 30.05.2019 ՀՕ-26-Ն)*

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ**

<b>1.</b>	<b>Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը</b>
	<p>Նախքան 2020 թվականի նոյեմբերի 9-ը Արցախի Հանրապետությունում գործում էր նոտարական տարածքներ՝ ըստ համապատասխան վարչատարածքային միավորների:</p> <p>Ելնելով ներկա իրավիճակից անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել «Նոտարիատի մասին» օրենքում և սահմանել նոտարական մեկ տարածք՝ Արցախի Հանրապետություն:</p> <p>Հաշվի առնելով Արցախի Հանրապետության օկուպացված տարածքների բնակչության մի մասի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը, նախագծով նախատեսվում է նոտարի գործուղումը Հայաստանի Հանրապետություն՝ տեղահանված բնակչության շրջանում նոտարական գործողություններ իրականացնելու համար:</p> <p>Ուստի անհրաժեշտություն է առաջացել ներկայացնել սույն օերնքի նախագիծը:</p>
<b>2.</b>	<b>Առաջարկվող կարգավորումների բնույթը</b>
	<p>Օրենքի նախագծով սահմանվում է, որ այսուհետ Արցախի Հանրապետությունում գործելու է միայն մեկ նոտարական տարածք:</p> <p>Անհրաժեշտության դեպքում նոտարին գործուղել Հայաստանի Հանրապետություն՝ տեղահանված բնակչության շրջանում նոտարական գործողություններ կատարելու նպատակով:</p>
<b>3.</b>	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	<p>Օրենքի նախագծի ընդունմամբ կապահովվի բնակչության կողմից նոտարական գործողություններից օգտվելու հարմարավետություն՝ ինչը կվերացնի այս բնագավառում ավելորդ քաշքշուկները:</p>
<b>4.</b>	<b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</b>
	<p>Օրենքի նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության և օրենսդրության կատարելագործման բաժնի հետ համատեղ:</p>
<b>5.</b>	<b>Նախագծի նորմատիվ բնույթը</b>
	<p>Օրենքի նախագիծը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ, որոնք տարածվում են անորոշ թվով անձանց վրա:</p>